ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948 թ., № 2 *Общественные науки*

Ն. Մելիքսեթ-Բեկ

ԶՈՐՐՈՐԴ ՀԱՅՔԻ 774–775 Թ.Թ. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ[1]

Հայաստանի բաժանումը Մեծ և Փոքր Հայքի՝ հավապատասխան նահանգներով և գավառներով այնպես, ինչպես այն պատկերացրած է VII *դարի անանուն հեղինակի (Անանիա Շիրակացու) «Աշխարհացույց»-ի մեջ, անկասկած, արտացոլում է Հայաստանի ոչ թե իրականությունը ոչ թե նույն* VII *դարի, այլ ավելի հին ժամանակաշրջանի՝* terminus a quo I *դ. մեր թվ. առաջ և* terminus ad quem VI *դ. մեր թվ. հետո։*

Այս բաժանումը, ինչպես հայտնի է, ներկայացնում է Մեծ Հայքն իրրև 15 նահանգից բաղկացած մի երկիր, որոնց թվում հիշվում է «երկրորդ աշխարհ՝ Զորրորդ Հայք»-ը։

Սակայն այդ Զորրորդ Հայքը, իբրև Ծոփաց աշխարհի լոկ մի գավառ, երբեմն Մեծ Հայքի մեջ էր մտնում և երբեմն Փոքր Հայքի մեջ։

Իսկ Փոքր Հայքը անտիկ դարերի և ոչ միջին դարերի ընթացքում (երբ նրա ներքո Կիլիկիան էր հասկացվում) երկար ժամանակ մտնում էր նախ՝ մինչև IV—V *դ. դ. Արևելյան Հռոմեական կայսրության մեջ, իսկ հետո՝* V *դ. սկսած՝ Բյուզանդիայի սահմաններում։ Եվ այդ՝ Փոքր Հայքի՝ 4 գավառի ստորաբաժանումը հեռանք էր, ինչպես հայտնի է, Հուստինիանոս* II *կայսեր վարչական ռեֆորմի, որն իր արտահայտությունն է գտել* XXXI *Նովելլայում «*De dispositione quattor administrationum Armenae*»՝ 536 թ. 17 ապրիլյան կալենդի, այսինքն՝ 18 մարտի, թվականով։*[2]

Չնայած, սակայն, այսպիսի անվիճելի ճշտարտության, Մովսես Խորենացին իր «Պատմություն Հայոց»-ի մեջ (I, 14) Փոքր Հայքի 4 գավառի ստորաբաժանումը առասպելական Արամին[3] *է վերագրում։*

«Բայց հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել գիսսս և գլեզուս հայկական. վասն որոյ մինչև ցայսօր ժամանակի անուանեն Ցոյնք զկդիժայն զայն Գոռային Արմենիան, որ Թարգմանի Առաջին Հայք։ Եւ զգաստակերան, զոր շինեաց յանուն իւր Մշակ կոչնապետն Արամայ, փոքրագունիւք պարսպեալ որմովք, անուանէին հինք աշխարհին Մաժաք, որպէս ոչ

---

[1] *Զեկուցված է Թբիլիսիի Սալինի անվան պետական համալսարանի Հայկաբանության ամբիոնի նիստին, 1947 թ. փետրվարի 11-ին։*

[2] Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. Спб 1908, стр. 165—171; *մանավանդ* 165—171: Corpus juris civilis, editio stereotypa quarta, volumen tertium. Novellae recognovit Rudolfus Schoell. Berolini 1912, p. p. 235—239.

[3] *Արամը, ինչպես այժմ պարզված է, ուրարտական թագավոր էր ժամանակակից Ասորեստանի Սալմանասար* III *թագավորի (860–825), որը հիշատակված է ասորեստանյան տարեգրություններում 880, 858 և 816 թ. թ.* (Б. Б. Пиотровский. История и культура Урарту, Ереван, 1944, стр. 86, 938).

կտրելով ուղղախօսել. մինչև յետոյ յոմանց ընդարձակագոյն շինեալ անուանեցաւ Կեսարիա։ Ըստ նմին օրինակի ի սեղեացն այնոցիկ մինչև ցբուն իւր սահմանսն, դրազում անբնակ երկիր ելից բնակչօք, որք Երկրորդ և Երրորդ անուանեցան Հայք, այլ և Չորրորդ։ Այս է առաջին և ճշմարիտ պատճառն վասն անուանելոյ դարևմտեան մեր կողմն Առաջին և Երկրորդ, այլ և Երրորդ և Չորրորդ Հայք»։[1]

«Խորենացու մոտ պահպանված ավանդությունը, որ հայոց սահմանները նվաճումների շնորհիվ տարածվել էին մինչ Պոնտական հողերը և մինչ Մաժաք-Կեսարիա և որ ամբողջ այդ տարածության մեջ հայերեն էին խոսում, ըստ էության,—ինչպես իրավացիորեն նշել էր Ն. Ադոնցը,— արձագանքներ են իրերի դրությանը Հուստինիանոսի էպոխայի, և ոչ թե հեռավոր ժամանակների մինչ Արամ, ինչպես պատմիչն է պատկերացնում։ Սա պարզ է այնտեղից, որ հիշյալ հողերի նվաճման կապակցությամբ Խորենացին հիշում է հայկական հողերի բաժանումը I, II, III և IV Հայքի, բայց հավատորեն վերադրում է այն Արամի առասպելական ժամանակներին, չվստահելով այն լուրերին, որ պտտում էին կայսրության մասում Հայաստանի նշյալ բաժանման իսկական ծագման մասին»։[2]

Ի դեպ, Հուստինիանոսի հիշյալ XXXI նովելլան պարունակում է տեղեկություններ նրա մասին, թե ո՞ր հողերից կազմվեց, այսպես կոչված, IV Հայքը Պոնտական դիոցեզի 4 թեմերի կազմի մեջ, որոնք ընդգրկում էին, ի միջի այլոց, և սատրապիաները։[3]

«Կազմակերպում ենք ես Չորրորդ Հայքը (τετάρτην Ἀρμενίαν), որը մինչ այժմ դուրկ էր գավառական կազմակերպությունից։ Բնակված լինելով այլ և այլ ժողովուրդներով, այն հայտնի էր այլ և այլ՝ մեզ համար օտար՝ հարյուրյուններով—Ծոփանենե (Τζοφανηνή) Անձիտենե (Ἀνζητηνή) Ծոփանե (Τζοφανή), Աստիանենե (Ἀστιανηνή), Բալավիտենե (Βαλαβιτηνή)—և սատրապների իշխանության ներքո էր գտնվում։ Վարչապետական այս հարյուրյունները հռոմայեցիներից չէր բխում և ոչ էլ մեր նախորդներից, այլ մտցրած էր այլ պետության կողմից։ Այս իսկ երկրում մենք մտցնում ենք քաղաքացիական կարգ, նշանակելով այնտեղ քաղաքացիական վարչապետ և տալիս ենք Մարտիրոսաց քաղաքը (Μαρτυροπολιτῶν) և Կիթարիս բերդը (Κιθαριζόν)։ Այն վերաբերում է օրդինար գավառների շարքին, քանի որ այն մենք դարձրինք կոնսուլական»։[4]

Այսպիսով, ինչպես նշում է Ն. Ադոնցը, «Չորրորդ Հայքին անցան հինգ ինքնավար իշխանությունների հողերը. Ծոփանենի, Անձիտենի, Ծոփենի, Աշտիանենի և Բալավիտենի գավառները կազմեցին միասին մի գավառ Մարտյուրոպոլիս մայրաքաղաքով»։[5] Իսկ Մարտյուրոպոլիսը կամ Մարտիրոսաց քաղաքը, ինչպես պարզված է, դա՝ Տիգրան II-ի ժամա-

[1] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի («Պատմագիրք Հայոց» II, 1), Տփղ. 1913, էջ 46—47։

[2] Н. Адонц, op. cit., 203.

[3] Karl Gutterbock, Römisch-Armenien und die römischen Satrapien im 4. bis 6. Jahrhundert, Königsberg 1900.

[4] Н. Адонц, op. cit., 168.

[5] Նույն տեղում, 179։

նակների Հայաստանի մայրաքաղաքն է, նույն Տիգրանակերտը, հետագայում Մայաֆարկին—Ֆարկին—Դիարբեքիրը։[1]

Ընդհանրապես նովելլան ընդգծում է, որ այն հողերը, որոնցից Զորրորդ Հայքը կազմվեց, մինչ 536 թ. դուրկ էին զավառական կազմակերպությունից և՝ բնակված լինելով այլ և այլ ժողովուրդներով՝ հայտնի էին այլ և այլ հորջորջումներով և գտնվում էին սատրապների իշխանության ներքո. իսկ վարչապետական այսպիսի հորջորջումը ո՛չ հռոմայեցիների և ո՛չ էլ նրանց նախորդների, այսինքն՝ հելլենների կողմից էր մտցված, այլ ավելի առաջ, հետևապես, պարզ է, պարսիկների կողմից։

Հուստինիանոս II կայսեր XXXI նովելլայում նշած վարչական ռեֆորմի հեռավոր արձագանքը մենք գտնում ենք, ի միջի այլոց, Հովհաննես Դրասխանակերտցու Պատմության մեջ հետևյալ կտորում. «Ի Ծոփաց մինչև ցքաղաքն Մարտիրոսաց և յաշխարհն Աղձնևաց արևմտեայ Զորրորդ Հայք»։[2]

Իսկ սույն կտորի գրեթե բառացի կրկնությունը սալիս է «Տիրք թղթոց»-ի այն վարիանտը, որ մեզ հասել է Վրաստանի պետ. թանգարանի Armenica հավաքածուի № 21 (—1558) ձեռագրում՝ 1318 թ., ուր կարդում ենք. «[Ի Ծոփաց աշխարհէ] մինչև ցքաղաքն Մարտիրոսաց յԱղձնիս արևմտեայ Զորրորդ Հայք»։[3]

Այն գրությունը Հայաստանում, որ եղել է Հուստինիանոս II կայսեր օրոք, որոշ չափով արտացոլում է հիշյալ Հովհ. Դրասխանակերտցին, երբ խոսում է Մորիկ կայսեր միջոցառումների մասին Հայաստանում վարչական նոր բաժանումներ կիրառելու ուղղությամբ. «Ապա կայսեր Մորկայ ձեռներիցութեամբ ինն փոփոխումն արարեալ անուանց աշխարհացն այնոցիկ, որ ի մերոյն Արամայ կարգաւ եղեալ էր... և Զորրորդ կոչեցեալ Հայք՝ յորում մայրաքաղաք է Մարտիրոսաց պոլիս, այսինքն՝ Նփրկերա, Ցուստիանուսիստ, զնա գրէ ի դիւան արքունիս»։[4]

Գեորգ Կյուպրացին իր «Descriptio orbis Romani» երկի մեջ Զորրորդ Հայքը VI դարում ներկայացնում է այսպիսի թեմերով.

«Ἐπαρχία Δ' Ἀρμενίας ἄλλης»
Δαδίμων νῦν μητρόπολις
Ἀρσαμουσατων
πολίχνη Χοςανων
Χοσομαχων
Κιθαρίζων
καστρον Μερτικέρτον
κάστρον Βαιουλοῦος

---

[1] Հ. Մանանդյան. Տիգրան Բ և նրա դարը, նոր լուսաբանությամբ ըստ սկզբնաղբյուրների, Երևան. 1940, էջ 64—68. Նույնի՝ Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հատոր Ա. Սկզբից մինչև Արշակունիների հաստատումը Հայաստանում (66 թ. մ. հ.), Երևան, 1944, էջ 170—171, և այլուր։

[2] Յովհաննու Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1918, էջ 18։

[3] Л. Меликсет-Бек. Новый вариант армянской «Книги посланий» и ученик Петра Ивера Иоанн Майумский, վրացերեն, առանձին սեղմագրով. «Вестник Гос. Музея Грузии» XI B, 1941, էջ 48։

[4] Հովհ. Դրասխանակերտցի, էջ 68։

κάστρον Παλιός
κάστρον Ἀρδων
κλίμα Σοφήνης.[1]

Սույն երկի մեջ Մ. Խորենացու հիշված «կլիմա»-ների հետևյալ ցուցակն է ներկայացված.

κλίμα Ἀνζητινῆς
κλίμα Διγησινῆς
κλίμα Γαρινῆς
κλίμα Βιλαβητινῆς
(*κλίμα Παλινῆς)
κλίμα Ὀρζιανινῆς
κλίμα Ἀστιανικῆς
κλίμα Μουζουρων.[2]

Զորրորդ Հայքն իր ստորաբաժանումներով հիշված է և VII դարի հայոց «Աշխարհացույց»-ի մեջ, որը Ս. Խորենացուն էր վերագրվում, մինչդեռ այն Անանիա Շիրակացու գործն է։[3]

Ահա այս «Աշխարհացույց»-ի հավաստի խմբագրության մեջ Զորրորդ Հայքը իր ստորաբաժանումներով ներկայացրած է այսպես. «Զորրորդ Հայք յերի կայ Բարձր Հայոց. և գաւառք են ի նմա ութ. Խորձեան, Հաշտեանք, Գաղնատուն, Բազահովիտն, Ծոփք, Անձիթք, Գորիք, Գեզիք։ Եւ ունի Զորրորդ Հայք բերդս և դեռ և լերինս և բիւրեղ։ Ունի և երիս և հաւս, և ձկունս, և ի գազանաց զառևեծ»։[3]

Նույն Զորրորդ Հայքը «Աշխարհացույց»-ի բնագրական խմբագրության մեջ ներկայացրած է այսպես. «Աշխարհ Հայոց. Զորրորդ Հայք, որ է Ծոփաց կողմն, յերի բարձր Հայոց, Մելտինէ քաղաքաւ սահմանի ըստ մտից, և ըստ հարաւոյ՝ Միջագետովք, և ըստ ելից Տարօնով։ Ունի գաւառս ութ. զԽորձայն՝ յելից հիւսիսոյ, ընդ որ իջանէ միւս Գայլ գետ առ Կողոբերդովն. զՀաշտէնս, յորմէ բղխեն աղբիւրք Տիգրիս գետոյ. իսկ ի մտից Խորձայնոյ՝ է Գաղնատուն գաւառ, հանդէպ հոմանուն բերդով. և հանդէպ նորա ի հարաւ Բալախովիտ գաւառ. և ի մտից նոցա Ծոփք, և Անձիթ գաւառ ի հարաւ, յորում Ծովք՝ Հոռէ բերդ. և ի մտից նոցա Դէղիկ գաւառ, յորում բերդք Կոնի և Քրիկ և Սոկ, որոց հանդէպ ի հարաւ է Գաւրէգ գաւառ, ընդ որս եկեալ Արածանի խառնի յնփրատ ի քաղաքն Լուսաթառիճ, և երթալով զմտիւք՝ ելանէ ի սահմանս Փոքր Հայոց, յելից Մել-

[1] H Gelzer. Georgii Cypri Descriptio orbis Romani [Bibliotheca Teubneriana], Lipziae 1890, p. p. 48—49: *Մենք, դժբախտաբար, ձեռքի տակ չունենք նորագույն հրատարակությունը* Le Synecdemos d'Hiroklès et l'opuscule geographique de Georges de Chypre, texte, introduction, commaintaire par Ernest Honigmann, preface de F. Cumont [Corpus Bruxellense Historiae Byzantinae]. 1939 p.

[2] Ibid., p 49.

[3] *Որ գեմ տես.* Я. А. Манандян. Когда и кем была составлена «Армянская география», приписываемая Моисею Хоренскому. «Византийский Временник», т. I (XXVI), М 1947, стр 1.7—143։

[3] *Պրոֆ. գ-ր Ա. Աբրահամյան Անանիա Շիրակացու Մատենագրություն, Երևան, 1944, էջ 869.*

տինէ, և ապա խառնի ի նա կաւկաս, զալով ի մտից կուսէ ի լեռնէն, որ կոչի Զիգոն Վասիթէոն, ե նախ քան զանգանել նորա յեփրատ՝ խառնի ի նա զեան Կառամինոն, որ գայ ի Տորոս լեռնէ և ընկալեալ յեփրատ զնայ ընդ հարաւ, հատանէ զլեառն Տորոս, յորում տեզուոյ զառանի ոկն բիւրեզ. և ունի Զորրորդ Հայք էրէս և հաւս և ի զազանաց զարիւծս։[1]

Զորրորդ Հայքի հիշատակությունն առկա է. ի միջի այլոց, ե Ստեփանոս Սյունեցու (VIII դ.) Դիոնեսիոս Թրակացու «Արուեստ քերականի»-ի մեկնության մեջ, որտեղ ժամանակի հայ բարբառների ցուցակն է ներկայացրած. «Եւ դարձեալ զքո լեզուիդ դիտիլն զբովանդակ զբառսն զիզերականս, որպէս սկոլճային և զՏայեցին և զԽութային ե զՀորրորդ Հայեցին և զՍպերային և զՍիւնին ե զԱրցախային. այլ միմիայն զմիջերկրեայսն ե զոսատանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ ենն։[2] Ուրիշ խոսքով ասած, այստեղ հիշված է ութ բարբառ, որոնց ցուցակը այլ դասավորությամբ, այսինքն՝ արևելք-հարավ-արեմուտք ուղղությամբ՝ հետևյալ պատկերն է տալիս. Արցախային, Սյունյաց, Կոլճերի. Խութայի. IV Հայքի, Սպերի և Տայքի, որոնցից առաջին հինգը արաբական խալիֆաթի գերիշխանության ներքո գտնվող Հայաստանում, մինչդեռ վերջին երկուսը Բյուզանդական Հայաստանում, որտեղ հայության դգալի մասը քաղկեդոնականության ազդեցությամբ սկսել էր հունանալ և վրացիանալ։

Վրաց պատմիչ Արսեն Սափարացին (IX դ.) իր «Պատմություն բաժանման վրաց և Հայոց» երկում նշում է այն փաստը, թե ինչպես Ներսես Միջին կոչված կաթողիկոսի գումարած Դվինի ժողովից (554—555 թ. թ.) անմիջապես հետո «ամբողջ Փարթլին և Զորրորդ Հայքը հրաժարվեցին հայերից քահանայական ձեռնադրությունն առնելուց».[3] որը համապատասխանում է հայ մատենագրության մեջ մեզ հասած «Վասն սուրբ ժողովոյն, որ եղեն ի Հայս ի սրբոյն Գրիգորէ սկսեալ» անանուն հեղինակի գրվածքի հետևյալ տողերին. «Ի ձեռն այսր ժողովոյ Վիրք և Զորրորդ Հայք որոշեցան ի Հայոց ձեռնադրութենէ»։[4]

Զորրորդ Հայքի կացությունը VIII—IX դ. դ. պատկերելու համար կարևոր է հիշել, որ այն 702 թվից անջատվել էր Բյուզանդական կայսրությունից,[5] մտնելով արաբական խալիֆաթի սահմանները։

995 թվին Զորրորդ Հայքում և սահմանակից գավառներում տեղի է ունենում մեծ երկրաշարժ, ինչպես վկայում է Ստեփանոս Տարոնեցին՝ Ասողիկն իր «Պատմութիւն տիեզերական»-ի III գրքի 96-րդ գլխում, որ «Ցազգս շարժման Զորրորդ Հայոց» վերնագիրն է կրում. «Ի Նոր թուականին շարժեցաւ երկիր. բայց սաստկագոյնս աշխարհն Զորրորդ Հայոց, հաշտեանք, Խորձեան, Ծոփք, Բալու և Պազնատուն»։[6]

---

[1] Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց [հրատ. Սուքիաս վ. Միւրեանի], Վենետիկ, 1881, էջ 30։

[2] Н. Адонц. Дионисий Фракийский и армянские толкователи. СПБ. 1915. стр. 187.

[3] Լ. Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. I. Երևան, 1934. էջ 39։

[4] Կարապետ վ., Երուսաղեմի Յովհաննէս episkoposի թուղթը առ Արաս Աղուանից կաթուղիկոս, Վաղարշապատ, 1896, էջ III հմմտ. Լ. Մելիքսեթ Բեկ. op. cit. I. 57։

[5] М. В. Левченко. История Византии. Краткий очерк. М—Л 1940, стр. 118.

[6] Ստեփանոսի վարդապետի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, աշխատ. Ս. Մալխասյանց, ՍՊԲ. 1885, էջ 203։

* * *

Արաբների առաջացումը պատմության ասպարիզում VII դարու կեսից և նրանց անընդհատ պայքարը բյուզանդացիների դեմ՝ Մերձավոր Արևելքին տիրելու նպատակով, որը առաջիններիի հաղթանակով վերջացավ, ի միջի այլոց, այն հետևանքը ունեցավ, որ Հայաստանի տերիտորիայի ժեծագույն մասը VII—VIII դ. դ. Խալիֆաթի գերիշխանության ներքո անցավ։

«Արաբական տիրապետության առաջին շրջանում խալիֆայության կենտրոնը գտնվում էր Դամասկոսում և կերիշիող դեր էին կատարում նոր աշխարհակալ պետության մեջ Ասորիքի արաբները, իսկ երկրորդ շրջանում կենտրոնը դառել էր 762 թվին հիմնված Բաղդադ քաղաքը և գերակշիռ դեր էին խաղում Իրաքի արաբները և մահմեդականություն ընդունած պարսիկ ազնվականությունը»։[1]

Սակայն Բյուզանդիայի և Խալիֆաթի միջև շարունակվող պայքարին մասնակցում էին և հայերը, որոնք քաղաքական պայմանների շնորհիվ երկու մասի բաժանված լինելով՝ դեպի մեկ կամ մյուս դրսի պետությունն էին ձգտում. ուստի և Հայաստանի դրությունը հաճախ երկդիմի էր դառնում։ Այսպիսի պայմաններում միանգամայն հասկանալի է, որ «եթե նա (Հայաստանը) հավատարիմ էր մնում խալիֆայության՝ նրան անխնա պատժում էին հույները։ Իսկ եթե անցնում էր Բյուզանդիայի կողմը՝ վրեժ էին առնում արաբները»։

Հայերի բազմաթիվ ապստամբություններից արաբական տիրապետության դեմ «համազգային ազատագրական շարժման» բնույթ էին կրում 774—775 և 851—852 թթ. թ. ապստամբությունները, որոնցից առաջինը նկարագրել է Ղևոնդը, իսկ երկրորդը՝ Թովմա Արծրունին։[2]

Հայաստանի այլևայլ տեղերում Արդյա Արու-Ջաֆարի օրոք ծագած ապստամբությունները արձագանք էին գտել Արճեշում, Կարին, Արծնում և այլուր, ինչպես վկայում է Ղևոնդը («Պատմութիւն»)։

Նույն Ղևոնդը («Պատմութիւն», էջ 37) միաժամանակ մատնանշում է մի հանգամանք, որը փոքրիշատե թեթևացրել էր համաժողովրդական ծանր լուծը։

«Եւ յետ այսորիկ յաջորդէ դիշխանութիւն նորա (Արդյայի) Մահմետ Մահադի որդի նորա։ Եւ սա էր ազնուական քան զայր իւր և լաւագոյն բարուք։ Որպէս զամենայն տունս գանձուց զորս ապիսեալ պահէր ամրարիշան Աբդյա, և բաշխեաց պարգևս զորպէս իւրոյ։ Համարձակեաց և զդրունս մարդոյ հանել զփանաստանսն ի վանաց իւրեանց և զնուլ զպէտս կարօտելոց։ և եղև առատութիւն երկրի, և դիւտ արծաթոյ բնդարձակեցաւ։ և բնակչաց երկրի անդորրութիւն եղև ի հարկապահանջ բռնութենէ։ զի թէպէտ և զանուր լծոյ հարկին ծանրացոյց սակայն վասն դիւտի արծաթոյն հանդիսաւ

[1] Ակադ. Հակոբ Մանանդյան. Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ։ Երևան, 1931, էջ 8։

[2] Նույն տեղում, էջ 7։

[3] Նույնը նաև՝ Համո Հարությունյան «Սասունցի Դավիթ» էպոսի գրաշրջանը (պատմական ակնարկ)։ «Սասունցի Դավիթ», հոբելյանական ժողովածու, Երևան, 1939, էջ 248—266։ Ս. Պողոսյան. Պատմական ակնարկ «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսի ժամանակաշրջանի մասին։ «Սասունցի Դավիթ» 1000, Երևան, 1941, էջ 195—200։

երկիրս առ փոքր մի ի չար առաստանաց վասանգին. քանզի և լերինք արծաթոյ յայտնեցան յաշխարհիս Հայոց առ ի հանել ի նոցունց խանութս արծաթոյ զտոյ ի պէաս ժարդկան յաւուր ի՛խանութեան նորա։

Ղևոնդի վկայությունը, դժբախտաբար, չի պարունակում կոնկրետ ցուցումներ Հայաստանի այն վայրերի մասին, որտեղ գտնվելիս են եղել արծաթի հանքերը և որոնք նյութական բարգավաճության աղբյուր են ծառայել հանքագործների համար, այն հոսագուրկ հանքագործները, որոնց վրա ծանրացել էին արաբական զավթիչների հարվածները։

Սակայն այն, ինչ որ լուրյան է մատնված Ղևոնդի ժամ. լրացնում է VIII դ. ասորա-հակոբիկ տարեգիր Կեղծ Դիոնեսիոս Թեր Մահրացին, որը ժանրամասն նկարագրում է Զորբորդ Հայքի Տուրիս կոչված վայրում 774—775 թ.թ. ծագած ապստամբությունը, երբ Ռազինը անցավ Արզունով և Մայֆերքաթով։[2]

«Արզուն»—«Արզոն»-ը՝ գա, անկասկած, ասորական ձևն է այն գավառի անվան, որին արաբերենում համապատասխանում է «Արզան», հունարենում «Արձանենե» (Պրոկոպիոս Կեսարացու -ում), լատիներենում «Արզանենա»—«Արզանիանա» (Ամմիան Մարցելինի ժամ), հայերենում «Աղձն-Արզյուն», կամ «Ագձն»—«Ագձնիք»։[3]

Ասորական ձև է ներկայացնում իրենից և «Մայֆերքաթ» քաղաքի անունը, որին հայերենում համապատասխանում է «Ամիդ», այսինքն՝ «Ֆարկին»-«Մայաֆարկին» կամ Մարտիրոպոլիսը-Մարտիրոսաց քաղաքը (Martyropolis), երբեմն Տիգրանակերտը (Tigranocerta)։[4]

Առանձին ուշադրության արժանի է Կեղծ-Դիոնեսիոսի այն ցուցումները, որ «այն վայրը, ուր ծագեց ապստամբությունը, գտնվում էր լեռնեռում, հյուսիսային շրջանում, որ կոչվում էր Տուրիս, որի ազգաբնակությունը բաղկացած էր ասորիներից և ուրարտացիներից, որոնք բաժանած ունեին այդ շրջանը», այսինքն՝ Զորբորդ Հայքը։

Մենք, դժբախտաբար, զուրկ ենք հնարավորությունից որևէ բան ասելու Տուտիսի մասին, քանի որ չգիտենք այդ անվան համանիշները հունական և հայկական աղբյուրներում, ես առավել՝ նրա այս կամ այն կետի հետ ունեցած լոկալիզացիայի մասին։

Համեմատաբար ավելի բարդ է խնդիրը այն ժամանակվա Զորբորդ Հայքի ազգաբնակության կազմի մասին, որն ըստ Կեղծ-Դիոնեսիոսի ասորիներից և ուրարտացիներից է եղել բաղկացած։ Սա նշանակում է, որ VIII դարում Զորբորդ Հայքի հայությունն արդեն նոսրացել էր, գաղթ և չբացել էր, մասամբ կաղթելով այլ տեղեր, մասամբ էլ ձուլվելով շրջակա ազգությունների հետ։

---

[1] Պատմություն Լեհդամայ մեծի վարդապետի Հայոց, Երզրոր տպագրություն, ՍՊԲ, 1887, էջ 154—155.

[2] Chronique de Denys de Tell Mahre. Quatrième partie. Publiée et traduite par J. B. Chabot Paris, 1895 p.p 172—176 (208—212)

[3] H. Gelzer. Georgii Cypri Descriptio orbis Romani, p. 165. H. Hubschmann Die altarmenischen Ortsnamen, Strassburg, 1904, S. 249—250 Հ. Հիբշման. Հին հայոց տեղանունները, Վիեննա, 1907, էջ 167—169 Ս. Կոնոյանց «Անիայի գավառներ Հին Հայաստանի», Վաղ. 1910, էջ 17—28.

[4] Հ. Մանանդյան. Տիգրան Բ. և Հռոմը, էջ 64—68. Նույնի՝ Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. I. էջ 170—171 և այլուր։ «Ախ», VIII, 1908, pp. 197

Անկախ սրանից, ուրտիացիների պրոբլեմը հատուկ քննության արժանի է։

Խոսելով ասորական «Վարք Մարութա եպիսկոպոսի» (Վդ.) հուշարձանի մասին, մենք դեռևս 1942 թվին նշել էինք, որ այս վարքը, «անկախ այն հետաքրքրությունից, որ նա գրավում է Մարութա (մար-Ութա) անվան ստուգաբանության կապակցությամբ, հիշատակելի է այն աղբյուրների շարքում, որտեղ խոսվում է օտացոյց, հայերեն թարգմանությամբ օտայեցոց երկրի մասին», որտեղից «Օտայ անուն քրմապետ[ն]... էառ իւր ի կնութիւն զդուստր ուրումն ի նախարարացն Հայոց՝ Մարիամ կոչեցեալ։»[1] «Ամենայն կասկածից դուրս է,— գրում էինք մենք նույն տեղում,— որ այս հուշարձանում հիշված օտայեցոց երկիրը ոչ մի կերպ չի կարելի նույնացնել Էտիունի-Օտենե Ուտիքի հետ, որ լավ հայտնի է աղբյուրներից, քանի որ այդպիսին կարծվում է Տիգրիսի շրջանում... և, հետևապես, օտայեցիք այս դեպքում ոչ մի առնչություն չունեն ուտիացիների կամ ուղերի հետ»։ Ընդսմին «այսպիսի եզրակացությունը բխում է, ի միջի այլոց, և այն փաստից, որ Կեղծ Դիոնեսիոս Թել-Մահրացու ժամանակագրության մեջ ուրտիացիք ասորիների հետ միասին հիշատակված են իբրև բնակիչներ Տուտիսի շրջանի, որը Զորրորդ Հայքումն էր գտնվում, և որոնք մասնակից էին պարսկական (արաբական) բռնակալների դեմ ծագած ապստամբության»։[2]

Ուրտիացիների խնդիրը անկախ Կեղծ-Դիոնեսիոսի տվյալներից, հատուկ քննության է ենթարկված մեծագույն հայագետ, Վիեննայի Մխիթարյան Հակոբոս վ. Տաշյանի կողմից, որը հարուստ պատմական աշխարհագրական տվյալների օգտագործումով հետևյալ եզրակացությունների է հանդել.

«Գէորգ Կիպրացի դիտէ «երկու ժողովուրդ, որոց մին կը կոչուի Խութեցիք և միւսը Սանասանք», նոյն միջոցին Ասորիք դիտեն և կը յիշեն ճիշտ Հանծիթի մէջ Ուրտիցի ժողովուրդ մը (ասոր. Urtaye, յն. Ὀρταῖοι), ուստի «Որտ» ժողովուրդ մը, որուն համար բացայայտ կ՚ըսուի թէ հայերէնէ և ասորերէնէ բոլորովին տարբեր լեզու մը կը խօսէր տակաւին այն ատեն։ Աւելի ուշ ալ՝ ևս աւելի անդին՝ Արաբացիք կը յիշեն Խութի մէջ (զորոնք սաս Թովմ. Արծրունի, Պատմ. Ե., է շատ «խրթին» կը գտնէր և կը համարէր «գրեանք Ասորւոց», որոնք Աղրամելեայ և Սանասարեայ հետ եկած ըլլան, ուստի «Սանասնայք» կ՚անուանուին են) կը յիշեն «Խութեցի» (գրուած «Խովայթ-եցի») բարբարոս ժողովուրդ մը՝ բնակած լեռնագաւառի մը մէջ՝ որ կը կոչուէր էլ-Արբուն, զոր-Նէոլտեկէ լաւ ևս կը կարդայ էլ-Ուրբայ (=ասոր. Ortaye) Տոմաշեկ («Մասուն և Տիգրիս աղբերաց սահմանները» են, թրգմ. Հ. Բառն. Պիլէդիկեան, Վիեննա, 1896, էջ 12, 28—29 են) միայն տարակուսական կը գտնէ թէ Հանծիթի «արամայեցի» Ուրտեցիք մինչև Տարօն ու Բաղիշու կողմերը կրնային տալածուած ըլլալ են։ Ինչ ալ ըլլայ Զ., և նաև Ժ. դարուն կային Ուրտացիք կամ Որտացիք՝ ինքնուրոյն ցեղուաւ, զոր չէին հասկընար Հայք և Ասորիք և սորվիլ ստիպուած էին (տես. Noldeke-ի, ZDMG, XXXIII, 163 ff.) հետևաբար ոչ հայ էին և ոչ

[1] Վիակատար վարք և վկայաբանութիւնք սրբոց, I, Վենետիկ, 1810, էջ 585—586.

[2] Л. Меликсет-Беков. К истории удин (Utica-Armeniaca) „Труды Тбил. Гос. Унив.", XXIII, 1942, стр. 46—47.

արաժէացի ցեղով, թէև յետոյ հայացած ու ասորացած, բայց թերևս աւելի քրտացած ըլլան։[1] Զիարգ և է, արդէն ծնսէն այս Ուրտացիք կո կապէր հին Ուրարտուի բնակչաց հետ, զոր Հիւբշման (անդ) «շատ ապահով» կը գտնէ։ Բայց այժմ 'նաև Մարքուարտ[2] ուղղակի Ռնացորդ կըսէ հին Ուրարտեանց պետութենէ ետքը ցրուած՝ Հայոց մտնելով՝ նախկին տիրող ժողովրդեան և անունը հետեապէս հին Ուրարտու անուան համառօտում մը՝ Որտ-, ինչպէս այս Ասորեստ. «Ուրարաու», Դարեհի բաբելական «Ուրաշտու» (ուղղելի Ուրալ-տու) ունի ձևերս ալ, երբ. «Արարատ» էլ (Հերոդ. Գ. 94, է. 79), «Ալորատ. f» և ի վերջոյ. հայ.՝ Այրարատ։ Այժմ Կարստ (անդ՝ 411) կը վճռէ՝ այս տակաւին Ժ. դարու ապրող Ուտայեցիք միայն «ռումերեան ակկատեան ցեղէ կրնան ըլլալ», և այնպիսի տեղ մը (Անձիտ, Սասուն, Խույթ), ուր Սագասարի զրոյցի ասպարէզն է։[3]

Ի վերջոյ, ինչպէս է նշել և մեկնաբանել մի կարևոր հանգամանք Կեղծ-Դիոնեսիոսի նկարագրությունից։

Կեղծ-Դիոնեսիոսի ժամանակագրության տվյալների հետ ծանոթանալիս այն կիտուս, ուր խոսվում է Զորբորդ Հայքի Տուտիս կոչված վայրի հողազուրկ գյուղացիության ծանր տնտեսական դրության մասին, որն ավելի ևս բարդանում էր շնորհիվ տեղական 'կալվածատերերի հարստահարությունների և արաբական բռնակալների կեղեքման և հարկապահանջման, որի հետևանքով այդ գյուղացիությունը 774—775 թ.թ. ապստամբության ուղի էր ընտրել անելանելի գրությունից դուրս գալու համար, ակամա հիշում ես նույնպիսի դրությունը հանքագործ խալիբների ժամանակից, ասել է՝ գրեթե 1000 տարի նրանից առաջ, որի նկարագրությունն առկա է Ապողոն Ռոդոսացու (III դ. նախ քան մեր թ.) Argonautica-ի մեջ (II, 1000—1008), նշելով, որ աշխատավոր խալիբները բնակվելով դաժան և ժայռոտ երկրում՝ զբաղվում են երկաթի մշակումով, հույն հողինակը գրում է. «Նրանք (խալիբները) չեն զբաղված ոչ հողի մշակումով եգների օգնությամբ, ոչ էլ անուշ պտուղների բուծությամբ (պտղաբուծությամբ), և ոչ էլ հոտեր են արածացնում ցողավետ արոտավայրերում, կոտրելով երկաթածին պինդ հողը, նրանք փոխանակում են արդյունահանված երկաթը կենսամթերքների վրա. նրանց համար երբեք չի ծագում արշալույսը առանց նոր աշխատանքի. սև մրի ու ածուխի մեջ նրանք կատարում են իրենց ծանր աշխատանքը»[4]

***

Զորբորդ Հայքի Տուտիս վայրում 774—775 թ.թ. տեղի ունեցած դեպքերի նկարագրությունը մենք բերում ենք Կեղծ-Դիոնեսիոս Թել-Մահրա-

---

[1] Հիւբշման. «Հին Հայոց տեղւոյ անուններբը», էջ 54—56 կ'հիշէ Տեյլորի յիշատակած Բալիկի ցեղէ են։ Ծանոթ. Տաշյանի։

[2] J.Marquart. Armenische Streifen, «Ցուշարձան» էջ 291—302. Ծանոթ. Տաշյանի։

[3] Հ. Ս. Տաշյան. Հին Հայաստանի արևմտյան սահմանը Փ.բբ Հայք և Կողոպենէ (Սեբաստիա). «Հանդէս ամսօրեայ» 1940, թիւ 1—6, էջ 4—5։

[4] В. Латышев Scythica et Caucasica, I. 413—414 հմտ. II, 204 (Ապողոնի մեկնիչը) Նաև՝ «Вестник древней истории», 1947 г., № 3, стр. 281, 289.

ցու «Ժամանակագրության» հիման վրա, որ երկիցս հրատարակել է ֆրանսիացի արեելագետ J. B. Chabot-ն։[1]

«Ժամանակագրության» բնագիրը, որը սխալմամբ ասորական հակոբիկ պատրիարք Դիոնեսիոս Թել Մահրացուն էր վերագրվում և այս պատճառով կեղծ Դիոնեսիոսի անունով հռչակվեց Chronicon anonymum pseudo Dionysianum vulgo dictum), իսկապես մեզ չի հասել, այլ նրա փոխարեն առկա է անանուն ժամանակագրությունը, որ իրոք Զուկնինի վանքի մի ոմն վանականին է պատկանում. կազմված պիտի լինի հունական տոմարի 1086 թվին, այսինքն՝ մեր թվականության 775 թվին։[2]

774—775 թ.թ. ապստամբության նկարագրությունը մենք բերում ենք մեր թարգմանությամբ՝ համաձայն J. B. Chabot ի առաջին հրատարակության (1895 թ.)։[3]

P. 172 [208]... Երբ խղճուկները տեսան, որ այս բացահայտ թալանը չի գադարում, որ [այս հարկահավաքները] չունեին ոչ ամոթ և ոչ երկյուղ աստծուց, որ բոլոր թշվառությունների նախապատճառը հաշիվ չէր պահանջում նրանցից այն չարագործությունների մասին, որ նրանք շարունակ կատարում էին երկրում, ապստամբեցին։ Մենք տալիս էինք,—ասում էին նրանք,—և մեզ ե մեր հարևանների համար. մենք վճարում էինք մեր հարկը և նույնիսկ այն, որ մենք չպիտի մուծեինք։ Աթոր երբ պիտի կշտանան նրանք մեր մսով։ Մենք այլևս ոչինչ չենք տա, քանի որ չգիտենք՝ ձրտեղից վերցնենք, որպեսզի տանք։

Երբ կուսակալը այս լսեց, նա խիստ բռունցքով, կրճատացրեց ատամներով և՝ նմանվելով առյուծին՝ արյան ծարավ դղաց։ Նա (կուսակալը) հավաքեց նրանց (խղճուկների։ Լ.Մ.Բ.) դեմ քաղաքի բոլոր ոճրագործներին և մարդասպաններին։ Նա ուղարկեց իր տեղակալին հանդերձ հանցագործ և արյունածարավ մարդկանցով, երկրի մեծամեծներով և դարչելի ու անգութ դյուղացիներով։ Վերջինս (տեղակալը) կազմեց համագյուղացիներից մի բազմամարդ զորք, զինված նիզակներով և պարսատիկներով. և գնաց նրանց դեմ։ Դյուղացիները իրենց կողմից մեծ մեսս պատճառեցին բոլոր մարդասպաններին և գողերին, որոնք նրանց միջև էին գտնվում, և նրանց հարազատներին այնպիսի չարիք հասցրին, որ լեզուն ի վիճակի չէ այն նկարագրելու։

Իսկ այն տեղը, որտեղ խռովություն առաջացավ, գտնվում էր լեռներում. հյուսիսային շրջանում։ Այն կոչվում էր Տուտիս։ Ժողովուրդը բաղկացած էր ասորիներից և ուրտիացիներից, որոնք բաժանած ունեին իրար միջև այս շրջանը, այսինքն IV Հայքը։

P. 173. Այս իսկ շրջանում գտնվում էր մի վայր, որտեղ արդյունահանվում էր կապար, արծաթ և այլ երկաթահանքանյութ։ Մեծ ագետը, որը տարածվել էր ամբողջ այս երկրում, պատճառ եղավ նրա, որ մարդիկ

[1] Chronique de Denys de Tell Mahré. Quatrième partie, Publiée et traduite par J. B. Chabot [«Bibliotéque de l'Ecole des Hautes Etudes», fasc. 112] Paris, 1895. Chronicon anonymum pseudo Dionysianum vulgo dictum. ed J. B. Chabot [«Corpus scriptorum christianorum orientalium». Scriptores syri. Series tertia, t. II]. Parisiis, 1983.

[2] Н. В. Пигулевская. Византия и Иран на рубеже VI и VII веков. М.-Л. 1946, стр. 43—44

[3] Chronique de Denys de Tell Mahré etc, pp. 172—175 (ըստ ասորական ձեռագրի 208—212).

այսպիսի մեծ քանակությամբ հավաքվել էին այնտեղ, որտեղ գտնվում էր կապարը, որ այդ շրջանը բնդարձակ ճամբար դարձավ և որ թագավորը այնտեղ կուսակալ էր նշանակել։ Ասեն տեղից մարդիկ գալիս էին այս ոսկեանը և փորում էին մեծ և խորը հորեր պոզպատ որոնելու նպատակով։

[209] Իսկ գյուղացիական զորքը ուղղվեց այնտեղ, որը մենք նշեցինք։ Զորականները ուզեցին այն ռազմատուզանքի ենթարկել։ Սակայն պարսկական (մահմեդական։ Լ. Մ. Բ.) կուսակալները չուզեցին համաձայնվել։ Ներանց (գյուղացիների։ Լ. Մ.-Բ.) մեծամասնությունը,— ասում էին նրանք,—ձեր երկրիցն են, նրանք են հարկերի վճարողները։ Բայց նրանց համոզելը միանգամայն անհնարին էր. նրանք ուզեցին կատաղությամբ պատրաստվել կռվի և կողոպտելու այն ամենը, ինչ որ հակառակորդին էր պատկանում։ Պարսիկները (մահմեդականները։ Լ. Մ.-Բ.) հրամայեցին նրանց, որոնք ճամբարում էին գտնվում, պատրաստվել կռվի և չթողնել հակառակորդին իրենց մոտ, որպեսզի ոչնչացման չենթարկվեն... Իսկ երբ կռվը, որը ճամբարին չէր պատկանում, հարձակվեց նրանց վրա և ուզեց նրանց կոտորել. կապարի հանքերում աշխատողները փախուստի դիմեցին՝ հակառակորդի սրից ազատվելու համար։ Քանի որ դեռևս ձմեռ էր, ձյունը հաստ շերտով ծածկել էր այս վայրը, սառույցը նույնիսկ ծածկել էր հորերի բերանները, որ ճանաչել չէր կարելի՝ հալած ձյունով լցված լինելու պատճառով։ Փախուստի միջոցին շատերը թաքվում էին այդ հորերի մեջ, և նրանց մեծամասնությունը խեղդվում էր և կործանվում նրանց խորքում։ Շատերը կործանվեցին նաև սրից. թշնամին չէր խնայում նրանց և կողոպտում էր նրանց, ինչպես և ամբողջ ճամբարը։

[210] Հապա Երեմիա մալգարեն գա և ասե... [Քրիստոնյաները P. 174 չէին խնայում նույնիսկ իրենց ընկերներին, որոնք խեղվեցին] կամ ապանվեցին, և հորերից նրանց չհանեցին հոգին հանձնելու համար։ Իսկ եթե պատահականորեն նրանցից որևէ մեկին դուրս էին հանում, նրանից հագուստը հանում էին և թողնում էին մերկ՝ փոսի բերանի մոտ։

Ինչ վիրավորում է այն ազգին, որ նրանք հասցրին այս երկրին, որա մասին ավելի լավ է չխոսել։ Նախ, այն պատճառով, որ գուցե ոչ ոք մեզ չհավատա, թե ինչպիսի նենգություն ցուցաբերեցին նրանք։ այն էլ երկյուղից, որպեսզի հեթանոսները չիմանան որա մասին և չասեն, որ քրիստոնյաները աստծուց չեն վախում, քանի որ նրանց վարմունքը մոգերի վարմունքից վատթար եղավ։ Սակայն, որպեսզի ուրիշները ծանոթանան այն պատճառների հետ, որոնք մեզ այս ազգանները հասցրին, որպեսզի մեր գործերը տեսնողները զգույշ լինեին և նաև նշելու համար աստծո գթասրտությունը, որը հաճրիրատաբ առնում է մեր հանդգնությունը և մեր բազմաթիվ նենգ արարքները, մենք սրա մասին մի փոքր կպատմենք։

Այսպես ուրեմն նրանք շարժվեցին խզմուկների գեմ, և մեծ ձյան շնորհիվ, որը ծածկել էր հողը, վերջինները ի վիճակի չէին փախչելու։ Իսկ եթե այդ նրանց հաջողվում էր, հետամտողները վրա էին հաս-

նուս և ձյունի մեջ գցում թե նրանց և թե նրանց գույքը, կանանց և երեխաներին։ Հալածվողները դողում էին, ընդունելով, շնորհիվ դաժան ցրտի, աղի անկենդան դիզին դույն, իսկ հալածողները չխնայելով նրանց՝ մերկացնում էին տղամարդկանց, կանանց և երեխաներին, գցելով նրանց մերկ՝ առանց հագուստի և կոշկեղենի։ Նրանք (հալածողները։ Լ. Մ.-Բ.) նույնիսկ հանում էին նրանցից (հալածվողներից։ Լ. Մ.-Բ.) վարտիկները, չվախենալով մերկացնել նրանց սեռական [օրգանները]։ Նրանք (հալածողները։ Լ. Մ.-Բ.) անամոթ կերպով բռնաբարում էին կանանց և դուստրներին՝ դուստրների և կանանց ներկայությամբ։ Նրանց գլուխ կանգնած անզգամը կարգադրեց, որ որեէ մեկի կողմից հափշտակվածը իրեն է պատկանում։ Այնպես որ՝ թե իսքը անզգամը և թե նրա հետ միացած ավազակները կարող էին կատարել և բավարարել իրենց մոլեգին և ագահ իղձերը։

Գյուղացիները և նրանց պարագլուխները ավելի անողորմ երևացին, քան հեթանոսները և ոչ մի կարեկցություն չցուցաբերեցին հանդեպ իրենց եղբայրների, նենգորեն վերաբերվելով դեպի ամենքից հարգված անձնավորությունները։ Այս ավազակապետները ոչնչացրին մարդկանց տնտեսության բոլոր առարկաները. այրեցին ամբողջ փայտեղենը, ջարդեցին կավե բոլոր ամանները, գավթելով պղնձե և երկաթե բոլոր իրեղենները, նրանք չխնայեցին ոչ անկողին, ոչ դոներ, ոչ անոթներ, ոչ լագաններ, ենթարկելով այն ևս հրի։ Նրանք փշրեցին սափորները, գինու ամանները, կաթսաները, կուժերը։ Խմելով այս անոթներից որքան կարելի էր, հապա մնացածը նրանք ամբողջովին թափում էին հողի վրա։ Իսկ եթե ամանը հողումն էր թաղված և հնարավոր չէր այն կոտրել, նրանցից մեկը՝ վերցնելով նիզակը՝ տակը ծակում էր և գինին թափվում էր հողի մեջ։ Նույնը նրանք կատա-
[P. 175] րեցին և մեղրի նկատմամբ. ուտում էին որքան կարող էին/, իսկ մնացածը գետնի վրա էին թափում։ Նրանք ջարդեցին մեղվափեթակները և թափեցին այն դեպի ջուրը, ուստի և բոլոր մեղուները կոտորվեցին։ Նրանք համարձակություն ունեցան կատարել այս՝ սատանայի դրդմամբ, որը նրանց գծագրեց ուղին, որի շնորհիվ նրանք իրենց միջև եղած հեթանոսներից վատթար եղան։ Նրանք համարձակվում էին ուտել միս և պանիր սուրբ պահոց օրերին և կատարեցին բազում այլ անօրեն գործեր։ Այնպես որ, երբ մեղ լուր հասավ նրա մասին, թե ինչ կատարեցին նրանք իրենց հարազատների հետ, մենք մեծ վշտի մեջ ընկանք, սկսեցինք լալ և մեծ անհանգստություն զգացինք, տեսնելով թե որ աստիճանի կարող է սատանան գայթակղեցնել մարդկանց։

Նրանք համարձակվեցին նույնիսկ ոտնձգություն անել եկեղեցու նկատմամբ, որը նրանք կողոպտեցին. նրանք հափշտակեցին եկեղեցական գրքերը և աստվածապաշտության բոլոր իրեղենները։ Քանի որ նրանք իրենց կանանց փակել էին եկեղեցում, հեթանոսները հենց իրենք ներս էին խուժում այնտեղ և բռնաբարում կանանց տաճարների մեջ։ Եվ ահա այստեղ պետք է լալ Եվեմիայի հետ միասին և ասել.../

[212] Նկարագրված աղետները տեղի ունեցան այս վայրում։ Նրանք քշե-

ցին կանանց, որոնք մարդասպանների պես շղթայված էին, հավաքեցին ամբողջ տավար-ոչխարը և հետը տարան։ Նրանք այսպիսով անդան բազմաթիվ գյուղերով, քշելով գյուղացիներին, կողոպտելով և իրենց հետ տանելով բնակիչներին։

Ռաղինը անցավ Արդունով և Մայֆերկաթով և՝ տեսնելով այս քաղաքների կուսակալների ավազակաբարո գործերը դատապարտեց նրանց մեծ կոտանքների և անգութ տանջանքների, այնպես որ նրանք որդկերից կրծոտվեցին և այնպես մեռան։ Նա կալանդներով կոտրատում էր նրանց ձեռները և ոտները ու խլեց նրանցից նրանց բոլոր կողոպտածը։

Աստված հանձնեց նրանց այս անողորմ անգղամի ձեռքը, և նրանց կատարած բոլոր գարշելիությունները իրենց իսկ վրա դարձան։ Սրանց մասին ասում էին, որ նրանք բռնում էին փողոցներում անմորուս երիտասարդներին և բռնաբարում նրանց։ Անաստված դրագիրները և դրամափոխները, չնայած որ քրիստոնյաներ էին, հարկադրում էին բռնել և իրենց մոտ բերել ինչպես դեռահաս որիորդներին ժողովրդից, նույնպես և աղնվատոհմ անձանց դուստրներին, և բռնաբարում էին նրանց...

Եվ այսպես նա՝ նկատելով նրանց վատ գործերը՝ հրամայեց բերել իր մոտ, ծակոտել ոնգները և ուղտերի պես դսպել։ Նա ծակոտել տվեց նրանց ճակատները, վրան տախտակներ կախելով, տվեց նրանց շղթաներով կապելու, որ և քարշ պիտի տային իրենց ետևից...

... Ապա նրանց հանձնում էին ծառայի, որը ծաղրի առարկա էր դարձնում նրանց՝ քաղաքի հրապարակի վրա, որից հետո նրանց բանտը գցեցին։ Նա հացը տալիս էր նրանց այն քանակով, որ բավական լիներ նրանց գոյությունը պահպանելու համար։ Նրանց բանտարկության տուն տեղերից Ներսման հոտ էր ելնում՝ գերեզմանի դարշահոտությունից է՛լ վատթար։

Եվ այս փաստերից մի քանիսը ես նշեցի նրա համար, որպեսզի վարչապետները, ծանոթանալով սրանց հետ, վարվեին [ժողովրդի հետ] ըստ խղճի, չմոռանալով աստծուն, որպեսզի նրանք չվարվեին կամայականորեն՝ ազնվության հակառակ, գիտենալով, որ կա օրենք նույնիսկ նրանց համար, ովքեր օրենք են հրատարակում, և որպեսզի նրանք հասկանան, որ սանձարձակորեն վարվող իշխանավորը արագորեն կորցնում է իշխանի կոչումը, որը նրան փառքի է հասցնում, և ստանում է բռնակալի կոչում, որ լի է խելառությամբ և որը սկիզբն է լինում խելագարության...

Л. М. Меликсет-Бек

К истории крестьянского восстания в IV Армении в 774—775 г. г.

Резюме

Коснувшись деления Армении первых веков до и после н. э. на большую и малую—согласно анонимной армянской „Географии" VII века, приписывавшейся Моисею Хоренскому, а Малой Армении

в свою очередь, на 4 кантона—согласно XXXI новелле императора Юстиниана II от 536 г. и „Истории Армении" Моисея Хоренского (I, 14), автор настоящей статьи, оперируя данными „Descriptio orbis Romani" Георгия Кипрского от IV века и вышеупомянутой „Географии" VII века (как теперь полагают, Анании Ширакского), пытается выяснить картину административного деления и этнического состава т. н. IV Армении, отпавшей в 702 г. от Византийской империи.

Путем сопоставления затем данных из „Истории халифов" армянского историка VIII века Гевонда или Леонтия (гл. 37) о народных восстаниях в Армении 774—775 г. г. с аналогичными сведениями, содержащимися в анонимной сирийской „Хронике" от 775 г., известной обычно под именем Хроники псевдо-Дионисия (Chronicon anonymum pseudo Dionysianum vulgo dictum), по имени сиро-яковитского патриарха Дионисия Тель-Маһрейского, о крестьянских восстаниях в те же годы в местности Тутис, что в IV Армении, населенной сирийцами и уртийцами (отдаленными потомками ур[ар]тийцев?), в статье дается попытка изложения одного из эпизодов классовой борьбы в условиях феодализма на территории IV Армении во 2-й половине VIII века.

Это-ярко выраженное крестьянское восстание, вызванное тяжелыми условиями малоземелья и безземелья в одном из горно-скалистых районов Армении, известном богатыми залежами руд, которые местные жители-крестьяне добывали с применением самых отсталых и примитивных технических способов для обмена на жизненные припасы, при жесточайшей (и двойной) эксплоатации со стороны как местных землевладельцев собственников, так и органов государственной власти (арабского халифата?), сумевших в конечном счете подавить это восстание.

К статье прилагается перевод описания обстоятельств и картины восстания 774—775 г. г., сохраненного в сирийской „Хронике" псевдо-Дионисия Тель-Маһрейского (как теперь полагают, вышедшего из-под пера некоего монаха Зукнинского монастыря), от 1086 г. греческого счисления или 775 г. н. э., согласно публикации французского ориенталиста. J. B. Chabot, ссылку на которую читатель найдет в соответствующих подстрочных примечаниях данной статьи.